ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Ա. Ղազումյան

«31» օգոստոսի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռու մարզ քաղաք Վանաձոր

Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց

5-րդ <բ> դասարան

Մկրտչյան Մարիամ Զավենի

« 2023- 2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում սովորում են 33 աշակերտ, որից 13-ը աղջիկ են , 20-ը տղա են: Կան ներառական կրթության մեջ ընդգրկված 2 աշակերտ: Դասարանում հիմնականում սովորում են միջին կարողության աշակերտներ.կան նաև թույլ սովորող աշակերտներ: Չկան վտանգավոր աշակերտներ:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Դասարանում ձևավորել առողջ և ամուր կոլեկտիվ: Պետք է կատարել աշխատանքի բաշխում, ընտրել ավագ, տեղակալներ ստեղծել հանձնախմբեր, ձևավորել ծնողխորհուրդ: Ուշադիր լինել աշակերտների ՝ հիգիենայի կանոնների հետևելուն : Կազմակերպել ծնողական ժողովներ՝ համապատասխան իրավիճակին: Պետք է լինել խիստ զգոն և ուշադրություն դարձնել խնդրահարույց հարցերին: Աշակերտները լինեն ուշադիր և հարգալից միմյանց հանդեպ, դասասենյակի իրերի, գրքերի հանդեպ, ունենան հարգալից վերաբերմունք նաև ուսուցիչների, դպրոցի աշխատակիցների, այլ դասարանների աշակերտների հանդեպ:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1. Հոգևոր դաստիարակություն

1.1 Հավատն է դարեր շարունակ հայ ժողովրդին, ուժ ու հույս տվել պայքարելու համար և կեցության հիմք դարձել : Աշակերտներին պետք է բացատրել եկեղեցու կարևորությունը և սեր եկեղեցական տոների հանդեպ ,որպեսզի զերծ մնան աղանդներից: Պետք անցկացնել զրույցներ հայ եկեղեցու պատմության, նրա գործունեության և պատմական դերի մասին: Հիշեցնել Խ. Աբովյանի և մյուս մեծերի ասույթները հայ հավատի և եկեղեցու մասին: : Ընթերցել հատվածներ «Մանկական Աստվածաշունչ» գրքից:

3.2. Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների հետ զրուցել գրականության, արվեստի մասին, անցկացնել քննարկումներ, գեղեցիկը, վեհը, բարին դարձնել աշակերտների կարգախոսը և այն ձևավորել որպես բնավորության գիծ: Կազմակերպել կինոդիտումներ, հաճախ գնալ թատրոն, քննարկել, իմանալ քաղաքի արվեստագետների մասին, մասնակցել կազմակերպվող միջոցառումներին՝ և՛ դպրոցական, և՛քաղաքային, այցելել թանգարաններ, կազմակերպել էքսկուրսիաներ, լինել տեսարժան վայրերում և բնության գրկում, սերմանել սեր արվեստի, բնության հանդեպ և մաքուր պահել այն:

3 .3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական թեմայով հաճախ անցկացնել զրույցներ և միջոցառումներ, լույս ընծայել պատի թերթեր, հանձնարարել կարդալ հայրենասիրության թեմայով գրված ստեղծագործություններ, նաև ստեղծագործել, գրել շարադրություններ, ռեֆերատներ, իմանալ հերոսների և նրանց կատարած սխրանքների մասին: Կազմակերպել այցելություններ հերոսների համար կառուցված հուշարձաններին և հարգել նրանց հիշատակը: Ռազմահայրենասիրական թեմայով գրված բանաստեղծություններ և երգեր սովորեցնել: Հատկապես ուշադրություն դարձնել տղաների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, սովորեցնել հայրենիքի բարձրագույն և վեհ արժեքները, ճիշտ և անմնացորդ սիրել հայրենիքը: Սովորեցնել ճիշտ դասեր քաղել և գնահատել 2020 թվականի պատերազմը, սխալները, կորուստն ու արհավիրքը: Իմանան մեր դպրոցի զոհված աշակերտների մասին, ուշադիր լինեն զոհվածների անկյունի նկատմամբ:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն

Հետևողական լինել աշակերտների ֆիզիկական դատիարակությանը և առողջ ապրելակերպին: Հետևել, որ աշակերտները չխուսափեն ֆիզկուլտուրայի դասերից, խրախուսել առողջ ապրելակերպով զբաղվելը, անցկացնել զրույցներ՝ «Սպորտը մեր կյանքում», « Առողջ դաստիարակություն» և այլ վերնագրերով, կազմակերպել սպորտային խաղեր և մրցույթներ՝ օրինակ ունենալով դպրոցի հաղթանակը համահայկական մրցույթում:

3.5. Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել աշխատասիրություն, հետևել շրջապատի և դասասենյակի մաքրությանը և սեփական հիգիենային, սահմանել հերթապահություն՝ պահպանելով կանոնները, գրել շարադրություններ և անցկացնել զրույցներ ՝ «Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն» , «Աշխատանքի ուժը» և այլ վերնագրերով: Ուշադիր լինեն դասարանի և դպրոցի գույքի հանդեպ, վերանորոգեն, պատրաստեն ձեռքի աշխատանքներ, ակտիվորեն մասնակցեն շաբաթօրյակներին:

3.6. Բնապահպանական դաստիարակություն

Հաճախ այցելել բնության գիրկ, կազմակերպել էքսկուրսիաներ, ստեղծել կանաչ անկյուն և ծաղիկներ աճեցնել ու խնամել , հոգացավ վերաբերմունք ունենալ դպրոցամերձ տարածքի, նաև շրջապատի, քաղաքի այգիների ծառերի և ծաղիկների, անտառների հանդեպ:Մեր սերմանել բնության հանդեպ և մաքուր պահել բնությունը , գրել պատի թերթեր՝ «Փրկել բնություն» , «Մենք և բնությունը» վերնագրերով:

4.ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Մշտական կապ ունենալ ծնողների հետ, նրանց ներգրավել դպրոցական և դասարանական միջոցառումներին, ծնողների մեջ սերմանել ընկերասիրություն ,համախմբվածություն: Անցկացնել ծնողական ժողովներ, անհրաժեշտության դեպքում կատարել տնայցեր, դասարանում առաջացած

խնդիրները քննարկել ծնողների հետ, վերացնել անտարբերությունը թե՛ երեխայի, թե՛ դասարանի հանդեպ: Ծնողները ավելի ուշադիր պետք է լինեն իրենց երեխաների վարքի, առողջության, բացակայության, սովորելու հանդեպ: Պետք է տեղյակ լինել աշակերտների ընտանեկան խնդիրներին, աջակցել և օգնել:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Առաջին զանգի և Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում	1.09.2023	
II	Զրույց Վ. Համբարձումյանի կյանքի և գործունեության մասին		
III	Բոլոր աշակերտներին սովորեցնել ՀՀ օրհներգը, փակցնել ՀՀ օրհներգը, դրոշը, զինանշանը		
IV	Քննարկում՝ «2020 թվականի պատերազմն ու նրա դասերը»,« Պատերազմով խաթարված պատանեկություն» թեմաներով		
V	Շարադրություն և նկարներ՝ նվիրված աշնանը և Ուսուցչի օրվան, ասմունք		
VI	Զրույց «Հայկական ավանդույթները, որոնցով հպարտանում եմ ես» թեմայով		
VII	Զրույց՝ «Ես բնության մի մասնիկն եմ » թեմայով		
VIII	Դպրոցական կանոնադրության քննարկում, դպրոց՝ ուսման դարբնոց		
IX	Զրույց՝ նվիրված աշակերտների ֆիզիկական, հոգեկան և առողջական վիճակին		
X	Քննարկում՝« Ի՞նչ է ընկերությունը և բարեկամությունը» թեմայի շուրջ		
XI	Զրույց « Իմ երկիրը երեկ, այսօր, վաղը » թեմայով »		
XII	Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը հայ ժողովրդի կյանքում		
XIII	Բանավեճ՝ «Վատ սովորություններ, ինչպե՞ս պայքարել դրանց դեմ»		
XIV	Բանաստեղծություններ, շարադրություն և նկարներ՝ նվիրված ձմռանն ու Ամանորին (դիմակահանդես)		
XV	Քննարկում՝ «Իմ տունը և ընտանիքը» թեմայով		
XVI	Ռեֆերատ՝ «Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ մեր դասարանում»		
XVII	Զրույց՝ «Հայկական բանակի անցած ուղին» թեմայով, «Պատերազմից հետո»		
XVIII	Քննարկում՝ «Գիրքը տիեզերք է», զրույց, ասմունք, Փաստագրական ֆիլմի դիտում. «Հովհ. Թումանյան. Եվ սիրտ, և կամք, և միտք»		
XIX	Ելույթ՝ «Հայտնի մարդկանց կյանքի պատմությունը» թեմայով		
XX	Զրույց-քննարկումներ «Սպորտի դերը մեր կյանքում» թեմայով . թերթերի սպորտային էջերը		
XXI	«Արդարացի և անարդար արարքներ», «Արդյոք մի՞շտ են ծնողները ճիշտ»		

XXII	Զրույց՝ «Արցախյան հերոսամարտիկները։Եռաբլուր պանթեոն» թեմայով Զրույց՝ «Ես հայրենիքիս պաշտպանն եմ»		
XXIII	Մայրության և գեղեցկության տոնին նվիրված փոքրիկ միջոցառում		
XXIV	Զրույց՝ «Ես սիրում եմ իմ դպրոցը»		
XXV	Այց երկրագիտական թանգարան՝ Շուշիի գորգերը տեսնելու		
XXVI	Էքսկուրսիա դեպի պատմամշակութային հուշարձաններ		
XXVII	Զրույց՝ «Իմ կարողություններն ու ձեռքբերումները» , «Ինչպե՞ս հաղթահարել ծուլությունը» թեմաներով		
XXVIII	Ռեֆերատ՝ «Հայոց տոները»		
XXIX	Հարցաթերթ լրացնել, «Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները		
XXX	Զրույց՝ նվիրված Մեծ եղեռնին		
XXXI	Զրույց՝ «Համակարգչային խաղերը և դրանց բացասական հետևանքները» թեմայով		
XXXII	Զրույց՝ «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել, անհայտ զինվորի գերեզմանին. Հայրենական Մեծ Պատերազմի 79 ամյակ Հիշում ենք և հպարտանում. հուշարձանին ծաղկադրում		
XXXIII	Քննարկում՝ «Կարողանալ համապատասխանել Մարդ վեհ կոչմանը»,		
XXXIV	Քննարկում՝ «Իմ կատարած լավ գործերը», «Ի՞նչ տվեց այս ուսումնական տարին» թեմաներով. էքսկուրսիայի կազմակերպում		